

429. Արսուս.- Ըստ դրից սահմանացն՝ հաւանօրէն կոչեցեալ է ՚ի Թուրքաց Արսուզ-պուճաղի, ըստ Ժամատեանի
գտեղին նուաճեալ ՚ի մերոյս Լեւոնէ Ա):

473. Ի Կարգի թագաւորօրհնէից հետաքննելի մասն էր ձեւ երդման կամ խոստման թագաւորին առ ազգն, որ ՚ի կանոնիդ՝ հարցմամբ եպիսկոպոսապետին եւ հակիրճ պատասխանեօք ընծայելոյն՝ յարմարեալ է. այլ յառաջնումն անդ նուագի եւ ՚ի վերականգնութեան թագաւորութեանն, յորում այնքան իշխանք՝ շատ կամ սակաւ ազատակեացք՝ յանձն առին լինել լիճ Լեւոնի, ՚իդէպ էր եւ սմա յայտնապէս կամ հանդիսապէս ինչ խոստանալ նոցա եւ համօրէն ժողովրդեանն եւ ուխտի եկեղեցւոյն: Եւ արդ Ժամանակագիր մեր ասէ՝ սոցա «Պահանջեալ երդումն ՚ի Լեւոնէ, որ է այս. դրին զԱւետարանն առաջէն. եւ այս է օրինակ երդմանն. Ես Լեւոն Թագաւոր Հայոց, որ կամօքն Աստուծոյ լինելոց եմ թագաւոր Հայոց, Խոստանամ, ուխտեմ եւ երդնում առաջի Աստուծոյ, եւ երանելոյն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, որ լինիմ ես յայսմ հետէ պահապան եւ զերծանօղ Հայրապետին եւ սուրբ Եկեղեցւոյն Հայոց եւ ամենայն կղերիկոսաց նորա, ՚ի յամենայն կարի եւ ՚ի յօգուտ իւր պահելով, եւ ինամելով զՀայրենիսն, զՊատիւ եւ զԻրաւունս նորա. որչափ կարողացայց օգնականութեամբն Աստուծոյ, ըստ գիտութեան եւ կարողութեան իմոյ, ուղիղ եւ յստակ հաւատով. Այնպէս Աստուած օգնէ ինձ»:

Երիցս կրկնէ»:- Եթէ ոչ ըստ ամենայն բառից այսմ շարաբանութեան՝ արտասանեալ իցէ Լեւոնի, այլ հարկ է թէ եւ ոչ հեռի յայսմանէ. զի ոչ վայրապար ՚ի ներքս մուծանէ հեղինակն զայս ձեւ, մինչ լռէ զայլոց հանգամանաց հանդիսին. բայց տակաւին պահանջէն միտք՝ եւ բանս ինչ խոստման առ Պարոնայսն, զոր թերեւս կանխաւ արարեալ էր, եւ յայտնեցի ժամանակաւ:

475. Բ. Աւագ Չայուշ կամ Չաւուշ.- Յաւուրս յետին թագաւորաց Սիսուանայ յայտնեցաւ Կոստանդին ոմն յանուանէ, զոր եւ նշանակեցաք ՚ի վեր անդր՝ ի կարգի նորայայտ պատմութեանն Սոյ (542):